

Սարակներն էլ էնա պատիկ քեարեր կը բերին, ուստէք  
կտան ջիւջ քեարերիւ բելւիւր:

Դըլ<sup>1</sup> կը շնին, կտան ուստին. զիլն կը զանին բելւիւր:

Չիւր մութ կտայ էգա եղեկեցին կը գըլտին կը լմացըցն:

107. Յեւարըն Դաւիթ կըսը.— Խէրախիւտ խրեօխպէր.  
Խէր չունիմ, էրա խէրութին. էգա ուստէցներու հախ<sup>2</sup> տու,  
էգա սարակներու հախ տո՛ւ, առանցի հախ մի՛ թուղնի:

Որ չկայ էլ, յիւրը տեղից փո՛ւխ առ. եմ վերայ գըրի:

108. Խէրախիւտ խրեօխպէր, էրա խէրութին, քեառսուն  
տէրտէր, քեառսուն սարկաւադ ըծը խամա ճամբխի դեայ,  
վուր իս խըլետիւն պատարագ տէնիմ:

Ժամու մէջ ի՞նչ պէտք է, տէրտէրներ գտին, խիտ բերիս:

Յեօլան, էգա սարակներ էկան տուն:

109. Դաւիթ զինք էն գըշիր մնաց ժամու մէջ:

Խըլետիւն վուր լիւսցաւ, էնու խրեօխպէր քեառսուն  
տէրտէր, քեառսուն սարկաւադ առըց տարաւ խասցուց, հալա  
արիւ չըր դպիւր է.

Մէկ շարաթ Դաւիթ էնտե մնաց, պատարագ էրից. յիւր  
ժամու վերայ շատ խնդացաւ:

110. Չէն ընկեաւ քեաղքը մէջ, քեաղքը մարդիւր շատ  
խնդացան, թէ Դաւիթ վանք շընիւր է: Ժամու անուն կուծից<sup>3</sup>,  
գըրից Բանձը Մարութայ Ասպարածին:

Ըլաւ Դաւիթ էկաւ տուն, տէրտէրքիւր, սարկաւազներ  
թուղից ժամու մէջ:

111. Էնդիւց մամնիչ մարդ ըլաւ, խապար տարաւ Մը-  
սըրայ Մէլըն թէ.— Դաւիթ շուջացիր է, ուր խոր ժամ տուիր է  
շնի, մկայ էղի քեաղքը թագաւուր:

Մէլըն է, հեն տե ուր մօր կըսը.— Մարէ, տխար օր իս  
յէն օր կսպանէ Դաւթըն, դիւ չը թուղըր, մկայ Դաւիթ սկուն  
մարդ էղի. դէ՛, գինա մի՛ թորի:

112. Մըլըքը մէր կըսը.— Մէլըք, դիւ չըս ուղը քի սկօն  
կըտըրճ ակպէր ըլնը:

Կըսը.— Մարէ, իս տաճըկ, էնի խայ, դիւր ըծը ակպէր ըլաւ:

113. Մէլըքն կըլնը ուր կտըրճ մարդիւր կը ժողուէ:

Մէկն էն մարդերայ գլխաւուրն էգա Կուզ Բատին է,  
կըսը.— Մէլըք, դիւ ըծը իրաւունք տաս, իս կերթամ Սասուն,  
կը բերիմ թալան.

Քեառսուն կարճ կնըկ կը բերիմ, էրկանք աղան.

Քեառսուն յերկէն կընըկ կը բերիմ, դէվա<sup>4</sup> բառնան,

1 Վաղարշապատում՝ տիլ==Տիղմ, ցեխ: 2 Թրք.—Վարձ: 3 Օձե՞ց:

4 Թրք.—Ուղտ: